Վ Ճ Ի Ռ

Հանուն Հայաստանի Հանրապետության

22.01.2013, ք. Երևան

Մխիթար Սեբաստացի կրթահամալիր ՊՈԱԿ-ի

խաղարկային դատարանը

Նախագահությամբ դատավոր Արմեն Մարտիրոսյանի

Քարտուղարությամբ Կիմ Բալայանի

Մասնակցությամբ

Հայցվորներ Նարե Հովհաննիսյանի, Նարեկ Հովակիմյանի,

Էլեն Կարապետյանի, Մարինա Մնացականյանի

Պատասխանողի ներկ. Սուրեն Պարսյանի

/Լիազորագիր թիվ 27/

Դատարանում, դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի ավագ դպրոցի սովորողներ Նարե Հովհաննիսյանի, Նարեկ Հովակիմյանի, Էլեն Կարապետյանի ընդդեմ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի՝ ի դեմս կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանի, պատճառված վնասի վերացման և փոխհատուցման պահանջի մասին:

ՊԱՐԶԵՑ

Դատաքննության ընթացքում կողմերը դատարանին հայտնեցին, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի խաղարկային դատարանի աշխատակարգի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն, ցանկանում են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ և ներկայացվեց 21.01.2013թ. կայացված հաշտության համաձայնության գրավոր տեքստը:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի խաղարկային դատարանի աշխատակարգի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն, կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ: Կողմերի միջև կայացված հաշտության համաձայնութ¬յու¬նը ձևակերպվում է գրավոր:

Դատարանը նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը կողմերին պարզաբանեց դրա դատավարական հետևանքները:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի պահանջներով՝ նաև պարզեց, որ կողմերի կնքած հաշտության համաձայնությունը չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին, չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, ուստի և գտավ, որ հաշտության համաձայնությունը պետք է հաստատել, իսկ գործի վարույթը կարճել:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, դատարանը կարճում է գործի վարույթը, եթե դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը:
Առաջնորդվելով վերոգրյալով, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի խաղարկային դատարանի աշխատակարգով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածով, 109-րդ հոդվածի 7-րդ կետով, 110-րդ, 120-րդ, 130-132-րդ հոդվածներով, 140-րդ և 140.1-րդ հոդվածների 1-ին մասերով դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Հաստատել հայցվորներ Նարե Հովհաննիսյանի, Նարեկ Հովակիմյանի, Էլեն Կարապետյանի, Մարինա Մնացականյանի և պատասխանողի ներկայացուցիչ Սուրեն Պարսյանի միջև 21.01.2013թ. կնքված հաշտության համաձայնությունը:

Հաշտության համաձայնագիր
Քաղաքացիական գործով
ք. Երևան 21.01.2012թ.

Քաղաքացիական գործով հայցվորներ ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի ավագ դպրոցի սովորողներ Նարե Հովհաննիսյանը, Նարեկ Հովակիմյանը, Էլեն Կարապետյանը և Մարինա մնացականյանը և նույն գործով պատասխանող ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ը՝ ի դեմս կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանի, (հասցե՝ ք.Երևան, Ա.Բաբաջանյան 25), համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի, կնքեցին սույն Հաշտության համաձայնագիր հետևյալի մասին.
1. Պատասխանող կողմը պարտավորվում է օգտագործել ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտադատական և դատական բոլոր եղանակները «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի վերահաշվարկի որոշումը չեղյալ հայտարարելու համար,
2.Հայցվոր կողմը պարտավորվում է իր ակտիվ մասնակցությունը ունենալ գազի վերահաշվարկի վեճի վերջնական լուծման համար՝ հնարավորության դեպքում դատարանում հանդես գալով որպես 3-րդ կողմ,

3. Պատասխանողը պետք է շարունակի քայլեր ձեռնարկել նմանատիպ խնդիրները կանխելու համար, որի լավագույն լուծումը՝ աշխատակիցներին՝ իրենց իրավունքների և պարտականությունների և համապատասխան օրենսդրական դաշտի պարբերաբար ծանոթացումն է:
4. Պատասխանողը պարտավորվում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ից պահանջել համաձայն ԳՄՕԿ-ի արտահերթ ստուգաչաձում իրականացնել,
5. Սույն Հաշտության համաձայնությունը կազմված է 3 հավասարազոր օրինակներից, կնքված է համարվում դատարանի կողմից այն դատական ակտով հաստատվելու դեպքում և ուժի մեջ է մտնում այն հաստատելու մասին դատական ակտի ուժի մեջ մտնելու պահից, կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով:

Կողմերի ստորագրությունները

Հայցվորներ՝

Նարե Հովհաննիսյան՝

Նարեկ Հովակիմյան՝

Էլեն Կարապետյան՝

Պատասխանողի ներկայացուցիչ՝

Սուրեն Պարսյան՝

Մեզ պարզաբանված են հաշտության համաձայնության դատավարական հետևանքները:

Ն. Հովհաննիսյան՝ Ն. Հովակիմյան՝ Է. Կարապետյան՝

Ս. Պարսյան՝

Քաղաքացիական գործի վարույթը կարճել:

Դատական ակտը օրինական ուժի մեջ է մտնում կրթահմալիրի տնօրենի համապատասխան հրամանով, որը սահմանված կարգով ենթակա է հրապարակման:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: